Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 836 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԱՐՑԱԽԻ ԵՎ ՋԱՎԱԽՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ-ի Արևելյան թեմի Տիկնանց միության աջակցությամբ օգնել Հայաստանի Հանրապետության մարզերի, Արցախի և Ջավախքի հայրազուրկ, 44-օրյա պատերազմում զոհվածների երեխաներին՝ տարեկան երկու անգամ տրամադրելով դրամական հատկացումներ, մեղմել սոցիալական լարվածությունը և նպաստել աղքատության կրճատմանը: Ներկայումս ծրագրում ընդգրկված են շուրջ 1032 երեխաներ:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից
3.	Բարեգործը	Հայ Օգնության Ֆոնդ (630 Մեքոնդ Ավենյու, Նյու-Յորք, ԱՄՆ)
4.	Ծրագիրը կատարողը	Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Մ. Խորենացու փողոց 22, ՀՎՀՀ 02517115)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի, Տավուշի, Շիրակի, Արարատի, Գեղարքունիքի, Արագածոտնի մարզեր, Արցախ և Ջավախք Բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	105,980,000 դրամ

7.	Բարեգործությունն ստացողը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի, Տավուշի, Շիրակի, Արարատի, Գեղարքունիքի, Արագածոտնի մարզերում, Արցախում և Ջավախքում բնակվող 1100 հայրազուրկ մինչև 18 տարեկան երեխաներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Շահառուների ընտրությունը կատարվում է նրանցից ստացված դիմումների հիման վրա՝ համագործակցելով տեղական իշխանությունների, միասնական սոցիալական ծառայության և եկեղեցու թեմերի հետ, ինչպես նաև տնայցերի հիման վրա: 2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում նախատեսվում է իրականացնել՝ 1. Տարին երկու անգամ դրամական օգնության տրամադրում՝ 99,300,000 դրամի չափով: 2. Հայ Առաքելական Եկեղեցու թեմերի հոգևոր սպասավորների հետ համատեղ շահառու երեխաների մկրտության արարողությունների իրականացում: Ծախսեր չեն նախատեսվում: 3. Կազմակերպական ծախսեր՝ 6,680,000 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների ձեռքբերում՝ 180,000 դրամի չափով: 2. Ավտոմեքենայի վառելիքի ձեռքբերում՝ 3,500,000 դրամի չափով: 3. Գրասենյակային պիտույքների ձեռքբերում՝ 600,000 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	1. Ծրագրի սպասարկման համար ծախսվելու է 6,680,000 դրամ՝ ծրագրի ընդհանուր արժողության 6.3 %-ը: Ծրագրի սպասարկումը ներառում է՝ 1) ծրագրի ղեկավարի աշխատավարձ՝ 2,400,000 դրամ.

		2) կապի ծառայություն՝ 180,000 դրամ. 3) ավտոմեքենայի վառելիք՝ 3,500,000 դրամ. 4) գրասենյակային պիտույքներ՝ 600,000 դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Սույն ծրագրի իրականացման շրջանակներում ՀՕՖ-ը համագործակցում է՝ 1) Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության. 2) Տեղական ինքնակառավարման մարմինների. 3) Հայ Առաքելական Եկեղեցու Արարատյան, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Գեղարքունյաց, Արագածոտնի, Արցախի և Վիրահայոց թեմերի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

24.11.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ